ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«19» մարտի 2019 թվական N:60-Ա քաղաք Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆՈՒՇԱՎԱՆ, ՍՊԱՆԴԱՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ԵՎ ՓԱՆԻԿ, ՀԱՅԿԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԱՎԱԳԱՆԻՆԵՐԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 120-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթներով և հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2018 թվականի հուլիսի 17-ի թիվ 26-Ա որոշման 1-ին կետը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անուշավան, Սպանդարյան համայնքների ղեկավարների և Փանիկ, Հայկավան համայնքների ավագանիների անդամների հերթական ընտրությունները նշանակել 2019 թվականի հունիսի 9-ին:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողով, Հայաստանի Հանրապետության ոստիկանության Շիրակի մարզային վարչություն, Հայաստանի Հանրապետության թիվ թիվ 30, 33 տարածքային ընտրական հանձնաժողովներ, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անուշավանի, Սպանդարյանի, Փանիկի և Հայկավանի համայնքապետարաններ:

Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է